ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-փետրվար)





2022թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 148.2 մլրդ դրամ, ինչը 19.6 մլրդ դրամով կամ 15.2%-ով ավել է 2021թ. և 35.3 մլրդ դրամով կամ 31.3%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2022թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 101.7 մլրդ դրամ, ինչը 6.2 մլրդ դրամով կամ 6.5%-ով ավել է 2021թ. և 17.8 մլրդ դրամով կամ 21.2%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2022 թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 46.5 մլրդ դրամ, ինչը 13.4 մլրդ դրամով կամ 40.5%-ով ավել է 2021թ. և 17.5 մլրդ դրամով կամ 60.3%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2022թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 308 մլն դոլար, ինչը 61.8 մլն դոլարով կամ 25.1%-ով ավել է 2021թ. և 72.3 մլն դոլարով կամ 30.7%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2022թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 211.5 մլն դոլար, ինչը 28.6 մլն դոլարով կամ 15.6%-ով ավել է 2021թ. և 36.3 մլն դոլարով կամ 20.7%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2022 թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 96.6 մլն դոլար, ինչը 33.4 մլն դոլարով կամ 52.8%-ով ավել է 2021թ. և 36 մլն դոլարով կամ 59.4%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**